ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2 1951 Общественные науки

Ռ. Առաքելյան

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԻՇԱՊԱՔԱՂ ՎԱՀԱԳՆԻ ՄԱՍԻՆ

Հին հայկական մատենագրության մեջ «Վիշապաքաղ» անվանված է Վահագնը։ Հայերենի բոլոր բառարաններում վիշապաքաղը մեկնաբանված է որպես վիշապ և քաղել բառերից հարաբարդված բառ, ըստ այնմ Վահագն աստվածն էլ համարված է վիշապ քաղող, վիշապներին հավաքող, վերացնող, ոչնչացնող-վիշապասպան։ Հայկազյան լեզվի նոր բառգրքում, օրինակ, վիշապաքաղ բառի տակ կարդում ենք՝ «որ քաղէ զկեանս վիշապին կամ հիդրայի· օձասպան մակդիր Հերակլի Վահագն կոչեցելոյ, որ ասի սատակեալ զհիդրայն բազմագլխի»։

Ստ. Մալխասյանցի կազմած հայերեն բացատրական բառարանում կարդում ենք՝ Վիշապաքաղ, ածական։ 1 Վիշապներ քաղող՝ հավաքող, երկրից վերացնող...2. Վահագն աստծու մակդիրը»։

Մատենագրական և հնագիտական տվյալները թույլ են տալիս ոչ միայն կասկածանքի ենթարկելու այդ բացատրությունը, այլև առաջարկելու բոլորովին նոր մեկնաբանություն։

Վիշապաքաղը հարաբարդված է վիշապ և քաղ բառերից։ Քաղ նշանակում է արու այծ, նոխազ կամ քոշ։[1] Վիշապաքաղ հետևաբար նշանակել է վիշապաայծ։

Հին աշխարհի և մեր հին հայկական առասպելաբանության մեջ երկու կենդանիների կամ մարդու և որևէ կենդանու խառնուրդից կազմված արարածներ շատ են հանդիպում, նույնիսկ դրանք պատկերացվել են կիսով չափ մարդ, կիսով չափ կենդանի՝ մեծ մասամբ մարդու գլխով, կենդանու մարմնով։ Օրինակ՝ մարդու գլխով և եզան մարմնով քանդակներ հանդիպում են ասորեստանյան, ուրարտական, աքեմենյան արվեստի մեջ։ Հաճախ այդ արարածները նաև թռչունի թևեր ունեն։ Մարդու գլխով և առյուծի մարմնով թևավոր առասպելական արարածներ նույնպես հանդիպում են ուրարտական քանդակագործության մեջ։ Հունական առասպելաբանության մեջ հայտնի են մարդու գլխով և ձիու մարմնով կենտավրները, ինչպես և մարդու ու այծի խառնուրդը կազմող պանը՝ անտառի աստվածությունը։

Հայկական առասպելներում և մատենագրության մեջ հիշատակվում են վիշապամարդ, այծամարդ, առլեզ առասպելական արարածները, որոնք պատկերացվել են կիսով չափ մարդ և կիսով չափ օձ, այծ, շուն և այլն։ Ապարանում գտնված չորրորդ դարի մի խոյակի վրա քանդակված է պատկեր մարդու մարմնով և շան գլխով։ Պատկերացվել են և առասպելական արարածներ իբրև երկու տարբեր կենդանիների խառնուրդ, օրինակ վիշապաոյուծ, եղջերուաքաղ։ Վերջինս համարվում էր կես եղջերու, կես այծ ու նույնիսկ բառակազմությամբ էլ բաև հ նման է վիշապաքաղին։

[1] Տես Նոր բառգիրք հայկազեան լեզուի, նաև Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան։

Նման պատկերացումները դեռևս 5-րդ դարում այնքան տարածված ու կենսունակ էին, որ Եղնիկ Կողբացին անհրաժեշտ է համարել նրանց դեմ պայքար մղել։

Վիշապաքաղը կիսով չափ վիշապ, կիսով չափ արու այծ պատկերացնելու դեպքում հասկանալի կդառնա թե ինչու Հայկական հին մատենագրության, ինչպես և բանահյուսության մեջ վիշապները պատկերվել են ոտքերով[1] և եղջյուրներով։[2] Պահլավերենում վիշապը իր ազի մակդիրով (Azi-visapa) նշանակել է անձնավորված մի օձազգ, իսկ Azi-Srvara եղջերավոր օձ։[3]

Վերջապես որ վիշապաքաղը վիշապայծ է նշանակում, ապացուցվում է հնագիտական փաստով։ Պետական Էրմիտաժում պահվում է մի արծաթե անոթ (ռիտոն), որը համարվում է աքեմենյան արվեստի արտադրություն։ Այդ անոթը պատկերում է ոչ այլ ինչ, բայց եթե թևավոր վիշապաքաղ (նկ. 1)։ Պատկերված է վիշապ՝ այծի գլխով, առջևի երկու ոտքերով և թռչունի թևերով։[4] Ամպրոպի փոթորկի, և ամպի աստվածությունը այդպես էլ պետք է պատկերացվեր՝ վիշապաշունչ, հրաշունչ, որը թևավոր է, թռչում է օդում, կայծակն ու որոտն է առաջացնում։

Վիշապաքաղը կամ վիշապաայծը Վահագն աստծու կերպարն է՝ առաջացած նրա պաշտամունքի ավելի վաղ փուլում, երբ ամպրոպի, փոթորկի և ամպի աստվածությունը մի էր և երևան էր գալիս արու այծի ու թևավոր վիշապի միասնական պատկերով։ Հին հայկական առասպելների լավագույն գիտակ Մ. Արեղյանը մատնանշել է հայ ժողովրդի պատկերացված վիշապների ամպրոպային բնույթը, ինչպես և նրանց պաշտամունքի կապված լինելը ջրի, ամպի և հողմի կամ փոթորկի հետ։[5] Սակայն Արեղյանը չի նկատել բնության երևույթների կոմպլեքս պաշտամունքի միասնությունը և չի փորձել բացահայտելու պաշտամունքային տվյալ կոմպլեքսի և նրա հետ կապված ժողովրդական պատկերացումների երկար դարերի ընթացքում կրած փոփոխությունները։[6]

Ինչ խոսք, որ ջրի, ամպի, փոթորկի, ամպրոպի, կայծակի, կրակի և արևի պաշտամունքները շատ ավելի վաղ են առաջացել, քան հայ ժողովուրդը։ Նախնադարյան ավելի վաղ շրջանի մտածողությամբ բնության այս երևույթների կապակցությունները, անգամ առասպելական ձևով, չէին գիտակցվում։ Պաշտամունքի առարկա էին դառնում առանձին-առանձին երևույթները և նրանց վերաբերյալ պատկերացումներն էլ բարդ կապակցություններ չունեին։ Այս շրջանում ջրի կուլտը հանդես էր գալիս պարզ ձևով անմիջապես կապվելով երկրի վրա առկա, տեսանելի և օգտագործելի

---

1 Տես Նոր բառգիրք հայկազեան լեզուի վիշապոտն բառը։

2 Հայկական հեքիաթներում էլ կարմրագույն մեծ, ոչ թունավոր օձերը, որոնց ժողովուրդը վիշապ կամ պարսկերեն շամմար անուններով է կոչում, պատկերացվում են եղջյուրներով։

3 Աճառյան Հ., Արմատական բառարան, վիշապ բառը։

4 Նման ռիտոն գտնված է նաև Աշխարազից ոչ հեռու՝ հին Նիսայում և պարթևական է համարվում (Масон М. Е., Новые данные по истории Парфии, տես Вестник древней истории, № 3, 1950).

5 Արեղյան Մ., «Վիշապներ» կոչված կոթողները, իրրև Դերկետո-Աստղիկ դիցուհու արձաններ, Երևան, 1941։

6 Նույն տեղում։

ջրի, աղբյուրների, գետերի, ծովերի հետ, ինչպես և անձրևի հետ, չէին նկատվում նրանց միջև եղած կապակցությունները, թեկուզ պաշտամունքային պատկերացումների ձևով։ Այդ շրջանում ջրի կուլտը կարող էր երևան գալ ջրերում ապրող ամենաբնորոշ կենդանու՝ ձկան պատկերով, մանավանդ մարդը վաղուց հետէ պարապում էր ձկնորսությամբ և կերակրվում նրանով։ Իսկ երբ անասնապահական երկրագործական զբաղմունքի զարգացման շնորհիվ ու նրանց պայմանավորվածությունը խոնավությամբ, արևի ջերմությամբ աստիճանաբար գիտակցելու դարավոր փորձով մարդը սկսում է իր դեռևս շատ ու շատ պակասավոր ճանաչողությամբ ու պատկերացումներով նկատել ծովերի, գետերի, աղբյուրների ջրերի, ամպերի ամպրոպի ու կայծակի թեկուզ իռացիոնալ կապակցությունները, այն ժամանակ նրա պաշտամունքային պատկերացումներն էլ բավականաչափ բարդ կապակցություններով են երևան գալիս։ Այժմ ջրի, ամպի, հողմի կամ փոթորկի, ամպրոպի պաշտամունքային պատկերացումները միասնական կոմպլեքսի ձևով են դրսևորվում և իրար հետ են կապակցվում երկրի վրա ու մթնոլորտում տեղի ունեցող երևույթները, որոնք կապված են ջրի տարերքի հետ։ Դրան համապատասխան այժմ ձուկը, կամ միայն ձուկը չի կարող ջրի կուլտի հետ կապված պատկերացումների իրար հետ կապակցված բազ-



Թևավոր վիշապաքաղ (արծաթե անոթ) Պետական Էրմիտաժ

ման շնորհիվ ու նրանց պայմանավորվածությունը խոնավությամբ, արևի ջերմությամբ աստիճանաբար գիտակցելու դարավոր փորձով մարդը սկսում է իր դեռևս շատ ու շատ պակասավոր ճանաչողությամբ ու պատկերացումներով նկատել ծովերի, գետերի, աղբյուրների ջրերի, ամպերի ամպրոպի ու կայծակի թեկուզ իռացիոնալ կապակցությունները, այն ժամանակ նրա պաշտամունքային պատկերացումներն էլ բավականաչափ բարդ կապակցություններով են երևան գալիս։ Այժմ ջրի, ամպի, հողմի կամ փոթորկի, ամպրոպի պաշտամունքային պատկերացումները միասնական կոմպլեքսի ձևով են դրսևորվում և իրար հետ են կապակցվում երկրի վրա ու մթնոլորտում տեղի ունեցող երևույթները, որոնք կապված են ջրի տարերքի հետ։ Դրան համապատասխան այժմ ձուկը, կամ միայն ձուկը չի կարող ջրի կուլտի հետ կապված պատկերացումների իրար հետ կապակցված բազ-

մաթիվ կողմերի արտահայտիչը լինել. երևան են գալիս պաշտամունքային այլ պատկերացումներ, որոնց թվում և վիշապը որպես ջրի, ամպի, փոթորկի սիմվոլիկ մարմնավորողը, վիշապն էլ պետք է երկինք բարձրանա, որտեղ ամպրոպը, որոտն ու կայծակն են տեղի ունենում, ուստի նա պետք է թևավոր լինի, կամ նրա հետ պետք է կապվեն նրան երկինք բարձրացնող սիմվոլիկ էակները, որոնք իրենց հերթին երևույթների նույն կոմպլեքսի առանձին կողմերը մարմնավորող սիմվոլներ են և կարող են երևան գալ այծի, եղան, թռչունի և այլ կերպարներով՝ առանձին կամ վիշապի հետ միասնաբար։ Վիշապաքաղի կերպարի մեջ մենք տեսնում ենք հենց նման միասնության առկայությունը։ Նման միասնացած կուլտը կարող է երևան գալ նաև ֆրատրիալ տոտեմական կուլտերի սինկրետիզմի հետևանքով, երբ հասարակությունը մայրական տոհմական համայնքից անցել էր հայրական տոհմական համայնքի։ Ինության երևույթների ու տարերքի իռացիոնալ պատկերացումները մարմնավորող առասպելական էակների պաշտամունքը, իր նախնական աստիճանում առաջացած տոտեմիզմից, այժմ բարդանում, զարգանում է և կապվում է երկնքի հետ՝ ստանալով աստեղային կոսմիկական բնույթ։

Ավելի ուշ, երբ առաջանում են բուն իմաստով աստվածությունները, մարդը նրանց վերագրում է մյուս կենդանիների համեմատությամբ ամենազոր և ամենահաղթ դարձած բանական էակի՝ այսինքն մարդու կերպարը։ Առաջ են գալիս անտրոպոմորֆիստական աստվածությունները. սակայն միանգամից մի կողմ չեն նետվում այն կոսմորֆները, որոնք մինչև այդ արտահայտում էին այժմ ընդարձակ և բազմազան ֆունկցիաներ մարմնացնող ավյալ աստվածության վերագրվող պաշտամունքը, կամ նրա տարբեր կողմերը։ Իրանով պետք է բացատրել, որ հնդկական ամպրոպային աստված Ինդրան պատկերացվում է իբրև հրեղեն խարտյաշ պատանի, որը սակայն կարող է երևան գալ նաև ցուլի կերպարանքով, պարսկական Վերեթրագնան, որը համարվել է գեղեցիկ փայլուն պատանի, իբրև թե կարող էր հանդես գալ նաև տղամարդու, ցուլի, ձիու, ուղտի, թռչունի, վարազի, թանձր մարմին ներկայացնող քամու կերպարանքով։ Նույնը կարելի է ասել հայերի ամպրոպի աստծու՝ Վահագնի մասին, որը պատկերացվում էր խարտյաշ պատանեկիկի տեսքով, ծնված ծիրանի ծովի կարմրիկ եղեգնի փողից. «Նա հուր հեր ուներ, բոց ուներ մորուս և աչկունքն էին արեգակունք»[1]։ Նա պատկերացվում էր նաև վիշապաքաղի, կամ միայն քաղի, վիշապի, եղան կամ ցուլի, ձիու, ուղտի, նաև հողմի, քամու կերպարանքով, սերտորեն կապված լինելով ոչ միայն ամպրոպի, կայծակի, կրակի, արևի, այլև ամպի և ջրի կուլտի հետ։

Այսպիսով, Վահագնի հետ կապված առասպելները երկար ուղի են անցել և մի ընդարձակ ցիկլ են կազմել, որը աստիճանաբար հարարարդվել է։

Արեգյանը այդ առասպելների միայն վերջին փուլն է քննության առարկա դարձրել, այն էլ նկատելիորեն ստատիկ վիճակում, ուստի և չի բացահայտել այդ առասպելների տեղական բովանդակությունն ու կոլորիտը և հին արևելյան առասպելների հետ նրանց կապերը բացատրելու փոխարեն Վահագնին իր առասպելով փոխառված է համարում Իրանից։

---

[1] Խորենացի, Գիրք առաջին, գլուխ ԼԱ.։

Ստատիկ վիճակում հարցերը քննարկելու նույն մոտեցման հետևանք է և այն, որ Աբեղյանը որոշ էպոսայում չար համարված աստվածությունները մշտապես չար է դիտում, իսկ բարի համարվածները՝ մշտապես բարի։ Մինչդեռ չար և բարի ատրիբուտները կարող էին վերագրվել ոչ միայն տարբեր, այլև միևնույն աստվածություններին միասնաբար, կարող էր տեղի ունենալ նրանց ճեղքում և իրարից հեռանալը հակադիր ուղղությամբ, թե՛ մեկը և թե՛ մյուսը դարերի ընթացքում իրենց հակադրությանը կարող էին վերածվել. էլ չենք ասում, որ տարբեր ցեղերի, տարբեր ժողովուրդների մոտ «բարին» չար կարող էր պատկերացվել՝ իսկ «չարը» բարի։

Վահագն աստվածն ավելի չար է եղել, քան բարի, և նրան մեղմելու, այսինքն նրա հետ կապված բնական արհավիրքները զսպելու, ինչպես և նրա ողորմածությամբ (ջերմություն, անձրև) ստանալու համար այդ ցասկոտ աստծուն մեծամեծ զոհաբերություններ էին կատարում։ Ի դեպ ասած՝ Աշտիշատ անվան յաշտից տեղի ստուգաբանությունը, այսինքն մի տեղ, որտեղ շատ զոհաբերություններ են կատարվել, պետք է կապված լիներ Վահագնի պաշտամունքի հետ, քանի որ Աշտիշատում գտնվում էր նրա մեհյանը։

Հետագայում Վահագնը նոր փունկցիաներ է ձեռք բերում և դառնում է հայերի ամենահարգի աստվածություններից մեկը։ Ամպրոպի, որոտի աստվածը կապվում է Ջրի, խոնավության աստվածություն ներկայացնող Աստղիկի հետ։ Ուստի նա դառնում է նաև հայերի ռազմի աստվածը։[1] Որպես այդպիսին արծվաթև վիշապի կերպարանքով նա մարտի է տանում իր վրա նստած Տիգրան Երվանդյանին, որը հաղթում է իր հակառակորդ Աժդահակին։[2] Նա քաջություն է շնորհում հայ ռազմիկներին՝ «Քաջութիւն հասցէ ձեզ ի քաջէն Վահագնէ» մաղթում է Տրդատ III-րդն իր մարդկանց։[3]

Ամենից առավել Վահագնը հանդես է եկել վիշապաքաղի կերպարանքով. սակայն, ինչպես պարզվում է, պարսիկները հայերի ռազմի աստծուն պատկերում էին նաև բաղի, կամ այծի կերպարանքով։ Այդ երևում է Փավստոս Բուզանդի նկարագրած մի միջադեպից. Երբ Արշակ 2-րդ արքան սպարապետ Վասակ Մամիկոնյանի հետ միասին Տիզբոն՝ Պարսից արքունիքն էր գնացել, մի օր նա դուրս էր եկել շրջելու Շապուհի ախոռները. այդ ժամանակ Պարսից արքայի ախոռապետը հայոց արքային՝ ինչպես ասում է Բուզանդը, մի տեղ էլ չդրեց և ոչ մի պատիվ չտվեց և նույնիսկ անարգելով ու ծաղրելով ասաց. «Այծից հայոց արքայ, եկ նիստ ի խրցան խոտո ի վերայ»։ Վասակը չտանելով իր արքային հասցված անարգանքը սպանում է հանդուգն ախոռապետին։[4]

Բերված հատվածի մեջ միանգամայն անսպասելի և անհասկանալի է Արշակին «այծից հայոց արքա» անվանելը։ Բայց հարցը միանգամայն պարզ կլինի, եթե նկատի ունենանք, որ պարսից ախոռապետը ծաղրում է հայերի և նրանց արքայի ռազմի այծակերպ աստծուն—Վահագնին։

---

1 Համեմատիր ուրարտական Խալդիայի հետ, որը նույնպես որոտի և ռազմի աստված էր։

2 Խորենացի, Գիրք 1-ին, գլ. ԻԶ։

3 Ագաթանգեղոս պարբ. 127։

4 Փավստոսի Բյուզանդացւոյ պատմութիւն հայոց, Վենետիկ, 1889 թ., էջ 128—129։

Վիշապաքաղ Վահագնին տրված նոր մեկնաբանությամբ հասկանալի են դառնում հայկական հին մատենագրության մեջ հանդիպող նաև այլ հատվածներ ու առասպելներ, օրինակ, հարդագողի ճանապարհը։ Բեղեցիկ պատանու հարդ գողանալն անհասկանալի է, բայց դա հասկանալի է, երբ գողացողը վիշապաքաղն է, քաղը, կամ ցուլը, որպիսի կերպավորումներով պատկերացվել է Վահագնը։ Իսկ երբ Վահագնը դիտվում է հիմնականում որպես ցասկոտ չար ասուված, կապված ջրի կուլտի հետ, ապա հասկանալի է դառնում թե ինչու նա արտերի ու կալերի բերքն է խլում, ինչու վիշապների, գրաստների, եզների հետ է կապվում, կամ ինքը դրանց կերպարանափոխվում։

Վիշապաքաղ Վահագնին տրված նոր մեկնաբանությունը ուղի է բացանում իրարից անջատ թվացող հին հայկական առասպելների՝ պատկերացումների մի ամբողջ կոմպլեքսի կապակցությունները, զարգացումն ու փոխակերպությունները դիտելու և լուսաբանելու համար։ Այն նպաստելու է նաև արևելքում հանդիպող նման կուլտերի ու նրանց արտահայտությունը հանդիսացող նյութական կուլտուրայի իրերի ճիշտ վերծանմանը։

Б. Аракелян

Замечания о Вахагне-вишапакаг-е

(Резюме)

Термин Visapakat *(վիշապաքաղ)* в древнеармянской литературе прилагается к имени древнеармянского бога грома, молнии и бога войны Вахагна, как определительное слово.

В арменоведении до сих пор принято считать, что этот термин слагается из армянских слов Visap+katel *(վիշապ+քաղել)*, где первое слово означает „змей", второе „убрать". Соответственно с этим термин Visapakat был интерпретирован как „убирающий змею" или „уничтожающий змею", а Вахагн—как „уничтожающий вишапа или вишапов—змеебийца".

В настоящей статье дается новое толкование этому термину.

Visapakat сложена из армянских слов Višap+kat *(վիշապ+քաղ)*= „змей+козел". Огромный змей с козлиной головой и передними ногами козла, крылатое существо является мифическим образом одного из главных древнеармянских божеств—бога грома и молнии, огня, облака (влаги, воды), вихря и смерча, позднее бога войны—Вахагна.

Новое толкование этого термина подтверждается данными древнеармянского языка и мифологии (тесно связанной с древневосточной мифологией), а также археологическими данными. В последнем случае мы имеем в виду образ крылатого вишапа с козлиной головой в ахеменидском серебряном ритоне, хранящемся в государственном Эрмитаже и на подобных же парфянских ритонах, найденных при раскопках в Старой Нисе.[1]

[1] М. Е. Масон, Новые данные по истории Парфии, Вестник древнейшей истории, № 3, 1950.

В статье по мере возможности дается анализ синкретического образа бога Вахагна, путей возникновения этого божества из тотемных представлений, фратриальных культов и первичных несложных культов природных стихий (вода, гром и молния, огонь, облако, небесная влага, ветер, смерч).

Новое толкование термина Višapakat поможет правильному пониманию ряда отрывков из древнеармянских источников, целого комплекса древнеармянских мифов, связанных с древневосточными мифами. Оно могло бы явиться подспорьем и для раскрытия мифологического смысла целого ряда предметов древневосточной археологии.

Տեղեկագիր 2—6